

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

### Հայաստանի Հանրապետությունից գյուղատնտեսական և վերամշակված արտադրանքի արտահանում Եվրոպական միության շուկա

#### 1. Ուղեցույցի նպատակը

Սույն ուղեցույցի նպատակն է արտադրողին և արտահանողին ներկայացնել այն գործնական քայլերը, փաստաթղթերը, նախապատրաստական աշխատանքները և հնարավոր ծախսային ուղղությունները, որոնք անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետությունից գյուղատնտեսական և վերամշակված արտադրանքը Եվրոպական միության շուկա արտահանելու համար:

#### 2. Որտեղից սկսել

ԵՄ շուկա արտահանում սկսելուց առաջ արտադրողը կամ արտահանողը պետք է նախապես պատասխանեն հետևյալ հարցերին՝

- ի՞նչ ապրանք է արտահանվելու,
- ապրանքը թա՞րմ է, վերամշակվա՞ծ, չորացվա՞ծ, սառեցվա՞ծ, կենդանական ծագմա՞ն, բուսական ծագմա՞ն, թե՞ խառը բաղադրությամբ,
- ո՞ր ԵՄ երկիր է նախատեսվում արտահանումը,
- ո՞վ է լինելու ներմուծողը կամ գնորդը ԵՄ-ում,
- ինչպե՞ս է ապրանքը փաթեթավորվելու,
- ի՞նչ պահպանման ժամկետ և ջերմաստիճանային ռեժիմ ունի ապրանքը,
- անհրաժեշտ է արդյոք սառը շղթա,
- արդյոք ապրանքը ներկայացվելու է որպես օրգանական, բնական, ավանդական կամ հատուկ որակի արտադրանք,
- արդյոք արտադրողը ունի բավարար փաստաթղթեր՝ արտադրանքի անվտանգությունը և ծագումը ապացուցելու համար:

Առանց այս հարցերին հստակ պատասխանելու՝ նպատակահարմար չէ սկսել արտահանման գործընթացը, քանի որ պահանջները, փաստաթղթերը և ծախսերը կախված են հենց ապրանքի տեսակից, նպատակային շուկայից և վաճառքի ձևաչափից:

#### 3. Արտահանման նախապատրաստման հիմնական փուլերը

ԵՄ արտահանում սկսելու համար առաջարկվում է շարժվել հետևյալ հաջորդականությամբ՝

- ապրանքի տեխնիկական նկարագրի կազմում,
- ապրանքի մաքսային կոդի ճշտում,
- նպատակային ԵՄ շուկայի ընտրություն,
- ԵՄ ներմուծողի կամ գնորդի հետ պահանջների համաձայնեցում,
- արտադրական պայմանների ստուգում,
- սննդամթերքի անվտանգության համակարգի ներդրում կամ վերանայում,

- հումքի և մատակարարների հետագծելիության ապահովում,
- լաբորատոր փորձարկումների իրականացում,
- պիտակի և փաթեթավորման համապատասխանեցում,
- անհրաժեշտ սերտիֆիկատների և փաստաթղթերի պատրաստում,
- լոգիստիկայի և սառը շղթայի կազմակերպում,
- բեռի նախնական ստուգում և բեռի առաքում,
- ԵՄ սահմանային կամ ներմուծման ընթացակարգերի ավարտ:

Նշյալ հիմնական փուլերի ներքո անհրաժեշտ քայլերը ներկայացվում են ստրև:

#### 4. Առաջին քայլ. ապրանքի տեխնիկական նկարագիր

Արտահանման համար արտադրողը պետք է ունենա ապրանքի տեխնիկական նկարագիր կամ արտադրանքի թերթիկ: Այն պետք է ներառի՝

- ապրանքի անվանումը, տեսակը և բաղադրությունը,
- հումքի ծագումը, արտադրության կամ մշակման եղանակը, օգտագործված հավելումները, եթե կան,
- ալերգենների առկայությունը,
- պահպանման ժամկետը և պայմանները,
- փոխադրման պայմանները, փաթեթավորման տեսակը,
- մեկ միավորի քաշը կամ ծավալը, խմբաքանակի համարակալման եղանակը,
- լաբորատոր փորձարկումների ցանկը:

#### 5. Երկրորդ քայլ. մաքսային կոդի ճշտում

Արտահանողը պետք է ճշտի ապրանքի հստակ մաքսային կոդը՝ HS կամ CN կոդը, որից էլ կախված են՝

- ԵՄ ներմուծման մաքսատուրքը, կիրառվող հարկերը և վճարները,
- ներմուծման ընթացակարգերը,
- պահանջվող սերտիֆիկատները, սանիտարական կամ ֆիտոսանիտարական պահանջները,
- սահմանային վերահսկողության անհրաժեշտությունը:

Մաքսային կոդը ցանկալի է ճշտել մաքսային մասնագետի, բրոքերի կամ ներմուծողի հետ:

#### 6. Երրորդ քայլ. նպատակային շուկայի և ներմուծողի ընտրություն

ԵՄ-ն միասնական շուկա է, սակայն գործնականում արտահանողը պետք է աշխատի կոնկրետ երկրի և կոնկրետ ներմուծողի հետ: Ներմուծողի կամ գնորդի հետ նախապես պետք է համաձայնեցնել՝

- ապրանքի տեխնիկական նկարագիրը,
- պահանջվող սերտիֆիկատները և լաբորատոր փորձարկումների ցանկը,
- պիտակի լեզուն և բովանդակությունը,
- փաթեթավորման չափը և ձևը,
- առաքման և վճարման պայմանները,

- վերադարձի կամ մերժման դեպքում պատասխանատվությունը,
- սահմանային մուտքի կետը,
- անհրաժեշտության դեպքում՝ TRACES համակարգի կամ այլ ընթացակարգերի կիրառումը:

Առաջին արտահանման դեպքում ցանկալի է սկսել փոքր փորձնական խմբաքանակից:

## 7. Չորրորդ քայլ. արտադրական պատրաստվածության ստուգում

ԵՄ շուկա արտահանման համար արտադրական տարածքը և գործընթացները պետք է համապատասխանեն սննդամթերքի անվտանգության և հիգիենայի պահանջներին: Արտադրողը պետք է ապահովի՝

- մաքուր և հիգիենիկ արտադրական տարածք, մաքուր և կեղտոտ գոտիների հստակ բաժանում,
- հումքի և պատրաստի արտադրանքի հոսքերի առանձնացում,
- ջրի որակի վերահսկում, մաքրման և ախտահանման պլան, վնասատուների դեմ պայքարի համակարգ,
- սարքավորումների մաքրություն և սպասարկում,
- աշխատակիցների հիգիենայի կանոններ,
- արտադրական թափոնների անվտանգ հեռացում, պահեստավորման ճիշտ պայմաններ:

Արտադրական տարածքում բոլոր հիմնական գործողությունները պետք է գրանցվեն: Եթե գործողությունը գրանցված չէ, գործնականում դժվար է ապացուցել, որ այն կատարվել է:

## 8. Հինգերորդ քայլ. սննդամթերքի անվտանգության համակարգ

Արտադրողը պետք է ունենա սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգ՝ հիմնված HACCP սկզբունքների վրա: Պետք է առկա լինեն՝

- արտադրական գործընթացի նկարագրություն,
- վտանգների վերլուծություն և վերահսկման կետերի սահմանում,
- մաքրման և ախտահանման ընթացակարգեր, վնասատուների դեմ պայքարի ընթացակարգ, հումքի ընդունման ընթացակարգ, պատրաստի արտադրանքի վերահսկման ընթացակարգ,
- ջերմաստիճանի վերահսկման, աշխատակիցների ուսուցման և ներքին ստուգումների գրանցումներ:

HACCP համակարգը չպետք է լինի միայն ձևական փաստաթուղթ: Այն պետք է իրականում կիրառվի արտադրության ընթացքում:

## 9. Վեցերորդ քայլ. հումքի և մատակարարների վերահսկում

Արտահանվող արտադրանքի անվտանգությունը սկսվում է հումքից: Արտադրողը պետք է ունենա՝

- մատակարարների ցանկ և մատակարարների հետ պայմանագրեր կամ գրավոր համաձայնություններ,

- հումքի ծագման փաստաթղթեր և հումքի ընդունման գրանցումներ և հումքի որակի նախնական ստուգումներ,
- մատակարարված խմբաքանակների նույնականացում,
- անհրաժեշտության դեպքում՝ հումքի լաբորատոր փորձարկումներ:

### **Բուսական ծագման հումքի դեպքում պետք է վարվի դաշտային մատյան, որտեղ նշվում են՝**

- մշակվող տարածքը, մշակաբույսը, օգտագործված պարարտանյութերը, բույսերի պաշտպանության միջոցները, կիրառման ամսաթվերը, չափաքանակները, բերքահավաքի ամսաթիվը և պատասխանատու անձը:

Կենդանական ծագման հումքի դեպքում պետք է ապահովվի կենդանիների, տնտեսության, կերի, անասնաբուժական միջոցառումների և մնացորդային նյութերի վերահսկման հետազօծելիությունը:

### **10. Յորտադրող քայլ. հետազօծելիության համակարգ**

Արտադրողը պետք է կարողանա յուրաքանչյուր խմբաքանակի համար ցույց տալ՝

- որտեղից և երբ է ստացվել հումքը,
- որ արտադրական խմբաքանակում է այն օգտագործվել,
- երբ է արտադրվել պատրաստի ապրանքը, որտեղ է պահեստավորվել, ինչ տրանսպորտով է տեղափոխվել և ում է վաճառվել կամ ուղարկվել:

### **Հետազօծելիության համար անհրաժեշտ է ունենալ՝**

- հումքի ընդունման գրանցամատյան, արտադրության օրագիր, խմբաքանակների համարակալում և լաբորատոր փորձարկումների արդյունքներ,
- պահեստավորման գրանցումներ, առաքման փաստաթղթեր և գնորդների և բեռնափոխադրողների տվյալներ:

### **11. Ութերորդ քայլ. լաբորատոր փորձարկումներ**

Մինչև արտահանումը արտադրողը պետք է իրականացնի ապրանքի տեսակից բխող լաբորատոր փորձարկումներ, որոնք կարող են ներառել՝

- թունաքիմիկատների մնացորդային քանակներ,
- ծանր մետաղներ, միկոտոքսիններ, նիտրատներ, մանրէաբանական ցուցանիշներ, ալերգեններ, սննդային հավելումների համապատասխանություն, սուլֆիտներ,
- կենդանական ծագման արտադրանքի դեպքում՝ հակաբիոտիկների և անասնաբուժական դեղերի մնացորդներ:

### **Լաբորատոր փորձարկման արդյունքում պետք է նշված լինեն՝**

- ապրանքի անվանումը և նմուշառման ամսաթիվը և խմբաքանակի համարը,
- փորձարկված ցուցանիշները, մեթոդները, արդյունքները և լաբորատորիայի տվյալները:

Առաջին արտահանման դեպքում ցանկալի է փորձարկումները կատարել մինչև մեծ ծավալի արտադրություն կամ փաթեթավորում սկսելը, որպեսզի անհամապատասխանության դեպքում հնարավոր լինի խուսափել մեծ վնասներից:

## 12. Իններորդ քայլ. պիտակավորում

ԵՄ շուկա արտահանվող փաթեթավորված սննդամթերքը պետք է ունենա ճիշտ պիտակավորում: Պիտակի վրա, ըստ ապրանքի տեսակի, պետք է նշվեն՝

- ապրանքի անվանումը, բաղադրիչների ցանկը, ալերգենները՝ հստակ առանձնացված,
- զուտ քաշը կամ ծավալը, պահպանման ժամկետը և պայմանները,
- արտադրողի տվյալները և ԵՄ ներմուծողի կամ պատասխանատու օպերատորի տվյալները,
- ծագման երկիրը, եթե պահանջվում է, սննդային արժեքը և խմբաքանակի համարը:

Պիտակավորումը պետք է լինի այն երկրի լեզվով, որտեղ ապրանքը վաճառվելու է:

Չի թույլատրվում պիտակի վրա օգտագործել ապակողմնորոշող, չապացուցված կամ սպառողին սխալ պատկերացում տվող ձևակերպումներ: Օրինակ՝ արտադրանքը չի կարելի ներկայացնել որպես օրգանական, եթե չկա համապատասխան օրգանական սերտիֆիկատ:

## 13. Տասներորդ քայլ. փաթեթավորում

Փաթեթավորումը պետք է համապատասխանի ինչպես ապրանքի պահպանման, այնպես էլ սննդի հետ շփվող նյութերի անվտանգության պահանջներին: Արտահանողը պետք է ունենա՝

- փաթեթավորման նյութի տեխնիկական նկարագիրը,
- սննդի հետ շփման համար պիտանիության հաստատումը,
- մատակարարի համապատասխանության հայտարարագիրը,
- պիտակների և տպագրական նյութերի համապատասխանության հաստատումը,
- ապրանքի պաշտպանություն վնասումից, խոնավությունից, լույսից կամ ջերմաստիճանից:

Եթե օգտագործվում են փայտե պալետներ կամ փայտե փաթեթավորում, պետք է ստուգել միջազգային ֆիտոսանիտարական պահանջների կիրառելիությունը:

## 14. Տասնմեկերորդ քայլ. սերտիֆիկատներ և պաշտոնական փաստաթղթեր

Արտահանվող ապրանքից կախված՝ կարող են պահանջվել հետևյալ փաստաթղթերը.

### 14.1. Առևտրային և մաքսային փաստաթղթեր

- պայմանագիր կամ պատվեր, առևտրային հաշիվ-ապրանքագիր,
- փաթեթավորման ցուցակ, տրանսպորտային փաստաթուղթ,
- արտահանման մաքսային հայտարարագիր, ծագման սերտիֆիկատ՝ պահանջի դեպքում,
- ապահովագրական փաստաթուղթ, եթե նախատեսված է առաքման պայմաններով:

### 14.2. Սննդամթերքի անվտանգության և որակի փաստաթղթեր

- արտադրանքի տեխնիկական նկարագիր, լաբորատոր փորձարկման արդյունքներ,

- HACCP կամ սննդամթերքի անվտանգության փաստաթղթեր,
- հետազոտության գրանցումներ,
- հումքի ծագման փաստաթղթեր, արտադրողի համապատասխանության հայտարարագիր, պիտակի նմուշ, փաթեթավորման համապատասխանության փաստաթղթեր:

### **14.3. Սանիտարական և ֆիտոսանիտարական փաստաթղթեր՝ եթե պահանջվում են՝**

- ֆիտոսանիտարական սերտիֆիկատ՝ բուսական արտադրանքի դեպքում.
- առողջության սերտիֆիկատ՝ կենդանական ծագման արտադրանքի դեպքում,
- TRACES կամ CHED փաստաթղթեր, եթե բեռը ենթակա է համապատասխան վերահսկողության,
- օրգանական արտադրանքի դեպքում՝ օրգանական սերտիֆիկատ և անհրաժեշտ ներմուծման փաստաթուղթ:

### **15. Տասներկուերորդ քայլ. լոգիստիկա և սառը շղթա**

Արտահանողը պետք է նախապես կազմակերպի ապրանքի փոխադրումը: Պետք է որոշել՝

- փոխադրման տեսակը, առաքման պայմանները, փոխադրման տևողությունը, բեռնման և բեռնաթափման պայմանները, սահմանային մուտքի կետը,
- անհրաժեշտության դեպքում՝ սառնարանային տրանսպորտը, ջերմաստիճանի վերահսկման մեխանիզմը և ապահովագրությունը:

Եթե ապրանքը պահանջում է սառը շղթա, պետք է ապահովել՝

- նախնական սառեցում կամ հովացում, սառնարանային պահեստավորում, սառնարանային տրանսպորտ, փոխադրման ընթացքում ջերմաստիճանի գրանցումների պահպանում:

### **16. Տասներեքերորդ քայլ. բեռի նախնական ստուգում մինչև առաքումը**

Մինչև բեռը ուղարկելը պետք է ստուգել՝

- արդյոք ապրանքի անվանումը բոլոր փաստաթղթերում նույնն է,
- արդյոք խմբաքանակի համարները, քաշը և քանակը համընկնում են հաշիվ-ապրանքագրի և փաթեթավորման ցուցակի հետ,
- արդյոք պիտակը համապատասխանում է հաստատված տարբերակին,
- արդյոք լաբորատոր արդյունքները վերաբերում են հենց տվյալ խմբաքանակին և սերտիֆիկատները ճիշտ են լրացված և տրանսպորտային միջոցը մաքուր է և համապատասխանում է պահանջներին,
- արդյոք սառը շղթայի պայմանները ապահովված են, ներմուծողը պատրաստ է ընդունել բեռը և արդյոք անհրաժեշտ նախնական ծանուցումները կատարվել են:

### **17. Ծախսերի հիմնական ուղղություններ**

ԵՄ արտահանում սկսելու համար արտադրողը կամ արտահանողը պետք է նախապես պլանավորի հետևյալ ծախսերը.

### 17.1. Արտադրական պատրաստվածության ծախսեր

- արտադրական տարածքի բարելավում և հիգիենիկ պայմանների ապահովում,
- սարքավորումների սպասարկում կամ ձեռքբերում,
- սառնարանային պահեստավորման ապահովում, ջրի որակի վերահսկում, վնասատուների դեմ պայքարի ծառայություններ:

### 17.2. Սննդամթերքի անվտանգության համակարգի ծախսեր

- HACCP համակարգի մշակում կամ վերանայում,
- խորհրդատվական ծառայություններ և ներքին ընթացակարգերի պատրաստում,

### 17.3. Լաբորատոր փորձարկումների ծախսեր

- թունաքիմիկատների մնացորդների փորձարկում,
- ծանր մետաղների, միկոտոքսինների, մանրէաբանական և այլ փորձարկումներ՝ կախված ապրանքի տեսակից,
- նմուշառման և նմուշների տեղափոխման ծախսեր:

### 17.4. Սերտիֆիկացման և փաստաթղթավորման ծախսեր

- ֆիտոսանիտարական սերտիֆիկատ,
- առողջության սերտիֆիկատ,
- ծագման սերտիֆիկատ և օրգանական սերտիֆիկացում, եթե կիրառելի է:

### 17.5. Պիտակավորման և փաթեթավորման ծախսեր

- պիտակի դիզայն և թարգմանություն, պիտակի իրավական ստուգում,
- նոր փաթեթավորման ձեռքբերում,
- սննդի հետ շփվող փաթեթավորման համապատասխանության փաստաթղթեր,
- տպագրական ծախսեր և փաթեթավորման փորձնական նմուշներ:

### 17.6. Լոգիստիկ և մաքսային ծախսեր

- բեռնափոխադրում, բեռնափոխադրման ապահովագրություն,
- սառնարանային տրանսպորտ, եթե անհրաժեշտ է,
- մաքսային բրոքերի ծառայություններ,
- սահմանային կամ ներմուծման վճարներ, պահեստավորման վճարներ,
- բեռի ստուգման կամ նմուշառման հնարավոր ծախսեր:

## 18. Հիմնական ռիսկեր և կանխարգելման միջոցներ

Ռիսկ	Ինչ անել նախապես
Սխալ մաքսային կող	Կողը ճշտել մաքսային մասնագետի և ներմուծողի հետ
Թերի փաստաթղթեր	Կազմել փաստաթղթերի ցանկ և ստուգել մինչև բեռնումը
Պիտակի անհամապատասխանություն	Պիտակը նախապես հաստատել ներմուծողի հետ
Լաբորատոր անհամապատասխանություն	Փորձարկումները կատարել մինչև արտահանումը

Ռիսկ	Ինչ անել նախապես
Հետագծելիության բացակայություն	Վարել խմբաքանակների և հումքի ամբողջական գրանցումներ
Սառը շղթայի խախտում	Օգտագործել համապատասխան տրանսպորտ և ջերմաստիճանի գրանցում
Սերտիֆիկատի սխալ լրացում	Սերտիֆիկատները ստանալ և ստուգել մինչև բեռի ուղարկումը
Փաթեթավորման խնդիր	Նախապես ստուգել փաթեթավորման համապատասխանությունը և դիմացկունությունը
Գնորդի պահանջների սխալ ընկալում	Պահանջները ստանալ գրավոր
Բեռի մերժում սահմանին	Նախապես ստուգել բոլոր փաստաթղթերը, փորձարկումները և ծանուցումները

## 20. Արտահանողի վերջնական ստուգաթերթ

Մինչև բեռի ուղարկումը պետք է ստուգել՝

- ապրանքի տեխնիկական նկարագիրը պատրաստ է,
- HS/CN կոդը ճշտված է,
- նպատակային երկիրը ընտրված է,
- ներմուծողը կամ գնորդը հաստատված է,
- ներմուծողի պահանջները ստացված են գրավոր,
- արտադրական տարածքը համապատասխանում է հիգիենիկ պահանջներին,
- HACCP կամ սննդամթերքի անվտանգության ընթացակարգերը կիրառվում են,
- հումքի ծագումը փաստաթղթավորված է,
- հետագծելիության համակարգը գործում է,
- լաբորատոր փորձարկումները կատարված են,
- պիտակը համապատասխանեցված է նպատակային շուկային,
- պիտակը թարգմանված է անհրաժեշտ լեզվով,
- փաթեթավորումը համապատասխանում է պահանջներին,
- առկա են փաթեթավորման համապատասխանության փաստաթղթերը,
- անհրաժեշտ սերտիֆիկատները ստացված են,
- առևտրային հաշիվ-ապրանքագիրը կազմված է,
- տրանսպորտային փաստաթուղթը պատրաստ է,
- մաքսային ձևակերպումները կազմակերպված են,
- սառը շղթան ապահովված է, եթե անհրաժեշտ է,
- ջերմաստիճանի գրանցման միջոցները պատրաստ են,
- բեռի տվյալները համընկնում են փաստաթղթերի հետ,
- ներմուծողը հաստատել է բեռի ընդունման պատրաստակամությունը,
- հաշվարկված են բոլոր հիմնական ծախսերը:

## 21. Բեռնափոխադրումների կազմակերպում և տրանսպորտային թույլտվություններ

ԵՄ շուկա արտահանման գործընթացում, բացի արտադրանքի անվտանգության, պիտակավորման, փաթեթավորման և մաքսային փաստաթղթերի ապահովումից, անհրաժեշտ է նախապես ուսումնասիրել նաև բեռի փոխադրման կազմակերպման հարցերը: Եթե արտահանումն իրականացվում է ավտոմոբիլային տրանսպորտով, անհրաժեշտ է ստուգել՝ արդյոք ընտրված երթուղու համար պահանջվում է միջպետական բեռնափոխադրման մեկանգամյա թույլտվություն, տարանցիկ թույլտվություն կամ ՏՆԵԿ/CEMT բազմակողմ թույլտվություն:

ՀՀ տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1226-Ն որոշմամբ՝ «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին»: Հղում՝ <https://www.arlis.am/hy/acts/113133>:

Արտահանողը պետք է հաշվի առնի, որ տրանսպորտային թույլտվությունը հիմնականում վերաբերում է փոխադրողին, սակայն բեռնափոխադրումը պատվիրելիս անհրաժեշտ է համոզվել, որ ընտրված փոխադրողը ունի տվյալ ուղղության և տարանցիկ երկրների համար անհրաժեշտ թույլտվությունները:

ՀՀ ՏԿԵՆ պաշտոնական կայքում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության, այդ թվում՝ «ՏԻՐ (TIR)» համակարգով աշխատող փոխադրողները պետք է ներկայացնեն դիմում, հայտ, բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրի պատճենը կամ օգտագործման իրավունքը հաստատող պայմանագրի պատճենը, պետական գրանցման վկայականի պատճենը և պետական տուրքի վճարման հաստատումը: Մեկ թույլտվության պետական տուրքը կազմում է 5,000 ՀՀ դրամ: ՏԿԵՆ հղում՝ <https://www.mtad.am/pages/Per-mis-si-ons>:

Նույն աղբյուրի համաձայն՝ միջպետական բեռնափոխադրումների ՏՆԵԿ/CEMT թույլտվություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության փոխադրողները պետք է ներկայացնեն դիմում, պետական գրանցման վկայականի պատճենը և պետական տուրքի վճարման հաստատումը: Մեկ ՏՆԵԿ թույլտվության պետական տուրքը կազմում է 20,000 ՀՀ դրամ: ՏԿԵՆ հղում՝ <https://www.mtad.am/pages/Per-mis-si-ons>:

Տրանսպորտային թույլտվությունների, տարանցիկ փոխադրումների, ՏՆԵԿ/CEMT թույլտվությունների և միջազգային բեռնափոխադրումների ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը նպատակահարմար է վերջնականացնել ՀՀ ՏԿԵՆ տրամադրած պաշտոնական տվյալների հիման վրա:

## **Հավելված. ԵՄ սննդամթերքի անվտանգության համակարգի առանձնահատկությունները**

Սույն հավելվածը ներկայացնում է ԵՄ սննդամթերքի անվտանգության համակարգի այն հիմնարար սկզբունքները և վերահսկողական մոտեցումները, որոնք նպատակահարմար է հաշվի առնել արտահանման նախապատրաստման փուլում:

### **1. ԵՄ սննդամթերքի անվտանգության համակարգի հիմնարար սկզբունքները**

Եվրոպական միությունում սննդամթերքի անվտանգության համակարգը հիմնված է «farm to fork» («արտադրությունից մինչև սպառում») սկզբունքի վրա, որի համաձայն վերահսկողությունը տարածվում է սննդամթերքի ամբողջ շղթայի վրա՝ հումքի արտադրությունից մինչև վերջնական սպառողին տեղեկատվության տրամադրումը: Համակարգի իրավական հիմքը Regulation (EC) No 178/2002-ն է:

Արտահանողը պետք է հաշվի առնի, որ ԵՄ մոտեցման հիմնական սկզբունքներն են.

- ԵՄ շուկայում կարող է շրջանառվել միայն անվտանգ սննդամթերք,
- սննդամթերքի անվտանգության հիմնական պատասխանատվությունը կրում է սննդի բիզնես օպերատորը,
- սննդամթերքի հետազոտությունը պարտադիր պահանջ է,
- ռիսկի դեպքում պետք է հնարավոր լինի արագ հայտնաբերել և շուկայից հետ կանչել խնդրահարույց արտադրանքը,
- ներմուծվող սննդամթերքը պետք է համապատասխանի ԵՄ-ում կիրառվող անվտանգության նույն կամ համարժեք չափանիշներին:

### **2. Ապրանքների դասակարգումը ԵՄ ներմուծման տեսանկյունից**

Արտահանման գործընթացի սկզբնական փուլում անհրաժեշտ է հստակ որոշել, թե որ կատեգորիային է պատկանում արտադրանքը, քանի որ ներմուծման պահանջները կարող են էականորեն տարբերվել:

Կենդանական ծագման արտադրանք՝ միս, կաթնամթերք, ձկնամթերք, ձու, մեղր և այլ նմանատիպ արտադրանքների խմբի նկատմամբ կիրառվում են առավել խիստ ներմուծման և սահմանային վերահսկողության պահանջներ:

Ոչ կենդանական ծագման սննդամթերք՝ հացահատիկ, չիր, ընկույզ, համեմունքներ, պահածոներ, բուսական յուղեր և այլ արտադրանքների խմբի հիմնական ռիսկերը սովորաբար կապված են պեստիցիդների մնացորդների, միկոտոքսինների, ծանր մետաղների և միկրոկենսաբանական աղտոտման հետ:

### **3. ԵՄ պաշտոնական վերահսկողության առանձնահատկությունները**

ԵՄ շուկա ներմուծվող սննդամթերքը կարող է ենթարկվել պաշտոնական վերահսկողության՝ Regulation (EU) 2017/625-ի շրջանակներում: Վերահսկողությունը կարող է իրականացվել ինչպես սահմանային մուտքի կետերում, այնպես էլ ներմուծումից հետո:

Պաշտոնական վերահսկողության միջոցառումները կարող են ներառել՝

- փաստաթղթերի ստուգում,
- ապրանքի ինքնության ստուգում և ֆիզիկական զննում,
- նմուշառում և լաբորատոր փորձաքննություն,
- արտադրողի կամ ներմուծողի գրանցումների ստուգում:

Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում իրավասու մարմինները կարող են կիրառել հետևյալ միջոցները.

- ապրանքի ներմուծման կասեցում,
- վերադարձ արտահանող երկիր,
- ոչնչացում կամ շուկայից հեռացում (հետկանչ):

### Օգտակար հղումներ

ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1226-Ն որոշում՝ ՀՀ տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով բեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգի վերաբերյալ՝ <https://www.arlis.am/hy/acts/113133>:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն. թույլտվություններ՝ միջպետական բեռնափոխադրումների մեկանգամյա թույլտվություններ և ՏՆԵԿ/CEMT թույլտվություններ՝ <https://www.mtad.am/pages/Per-mis-si-ons>:

ԵՄ Access2Markets հարթակը ներկայացնում է ներմուծման մաքսատուրքերի, ընթացակարգերի, ապրանքի պահանջների և կանոնների ստուգման գործիքակազմը, իսկ ԵՄ պաշտոնական վերահսկողության համակարգը պահանջում է, որ ներմուծվող սննդամթերքը և կերը համապատասխանեն ԵՄ-ում գործող բարձր չափանիշներին ([https://policy.trade.ec.europa.eu/help-exporters-and-importers/importing-eu\\_en](https://policy.trade.ec.europa.eu/help-exporters-and-importers/importing-eu_en)):

Սննդամթերքի ընդհանուր իրավունքի հիմքում Regulation (EC) No 178/2002-ն է, պիտակավորման պարտադիր կանոնների հիմքում՝ Regulation (EU) No 1169/2011-ը, իսկ TRACES-ը կիրառվում է կենդանական և բուսական առողջության, սննդի, կերի և համապատասխան ներմուծման սերտիֆիկացման գործընթացներում (<https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32002R0178&qid=1781276326025>):

Թունաքիմիկատների առավելագույն մնացորդային մակարդակների, աղտոտիչների, սննդի հետ շփվող նյութերի և օրգանական ներմուծման պահանջների համար կիրառվում են համապատասխան ԵՄ կանոնակարգերն ու հանձնաժողովի ուղեցույցները (<https://eur-lex.europa.eu/eli/reg/2005/396/oj/eng>):